



ՀԱՅԻՐԱՅԻՆ ԲԵՐԷՏ

ԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 50

ՅՈՒՆԻՍ 23/6 ՅՈՒԼԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Յունիս 23/6 Յուլիս † Թիւ 50

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար եւ Վերջ)

Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցին ահա այսպէս մի էր Հռոմայ Եկեղեցւոյն հետ, իբրեւ անդամ մը՝ գլխոյն հետ, իբրեւ գետակ մը՝ աղբերական հետ, իբրեւ ճառագայթ մը՝ արեւուն հետ։ Այսպէս ուզած է վէճն անկեան՝ Գրիգորոս, ըսելով առ Պետրոս. «Դու հաստատեցես զեղբարս քո»։ Կենդրոնի հետ միութեան այս անհրաժեշտ պետքը գիտէր Գրիգոր. և այնքան լաւ սորվեցուց զայս իր հօտին, որ ան՝ բաղձաթիւ դարերու մէջ Հռոմայ Եկեղեցւոյն միութենէն՝ գոնէ մասնակի կերպով. բաժնուած աճեցն անդամ, հաւատաւորացած է միշտ թէ Գրիգոր իր իշխանութեան լրութիւնը առած է Հռոմայ Քաջանայապետ Ս. Սեղբատրոսէն։ Նուիրական եղած էր այս աւանդութիւնը, անխախտ և բոլորովին անկախ չարամտաց ուժանց տուած անցողակի ծուռ մեկնութիւններէն։ Հայ նկարագրին բարեմասնութեանց հետ տիրապետող աւազակի կրքերն էին որոնք պատճառ եղան մեր նիւթական ու բարոյական անկումին։ Հպարտութիւնը, որ իբրեւ հարազատ գաւազ-

ներ հետք կը բերէ նախնանք, ինքնավստահութիւնը, բամբասանքը, անկախութեան ոգին, և որոնք իբրեւ խուրձ մը աղէտից՝ կը միանան անմխտակութիւն բառին ներքեւ, էական պատճառն է մեր բոլոր վայելքներն: Ասով ինկաւ թագաւորութիւնը. ասով քայքայեցաւ տունն: աղպին, որ վայրավատին զրուեցաւ չորս հովերուն: Ասով քակտեցաւ նաեւ Գրիգորաւանդ Ս. Հաւատոյ միութիւնը: Տիրեցին օտար մոլորութիւնք մեր լուսաւորունկ այգւոյն մէջ՝ իբրեւ սէղ և որումն, յոյն-Սեւեթական և ասորական յաւակնութիւններով: Եղան օրեր յորում կարծես փոթորիկը քար քարի վրայ չալաի թողուր այդ օրհնակ չէնքն զոր Գրիգոր չեւած էր. բայց հաստատուն հիմը կեցած էր անսրտան. և ինչպէս աւազողին Եղիայի պատասխանեց Տէր թէ՝ «Եօթն հազար այր պահեցի ինձ որ ոչ կրկնեցին ծուներ քահաղս», և ինչպէս տարակուսողն Յերոնիմոս թէ՝ «Ահա փաքր միւս եւս տիեզերք արիստական կզաւ», տեսաւ Աստուծոյ բանին անոր փճացումը՝ խորշակէ՛ցարնուած և վայրկենապէս ի չիք դարձած մարտիրոսութեան բանակներուն նման, այսպէս ալ Ս. Գրիգորի Եկեղեցւոյն մէջ ուղղափառութիւնը բնաւ չջնջուեցաւ և միշտ գրեթէ յաղթական ելաւ մոլորութեան հետ ընդդիմամարտ պայքարէն: Ողջամիտ փառապարտութիւն վերառաքող Կաթողիկոսներ, Եպիսկոպոսներ և պատուական ժողովուրդ ընտրեալ, ի բարի հաւատաւ և յանդգողող միաս. ո՛չ երբեք նուաղեցաւ Հայաստանի մէջ, հայրենիք կենսաբուլղի դրախտաւորին կայլակներու: Նաւակը Քրիստոսի էր. առաջնորդը՝ Պետրոս. բարեխօսն արագահաս՝ Գրիգորիոս, կոծեցաւ ծփեցաւ բաղխեցաւ նաւակը, բայց չընկղմեցաւ:

Մի հատաատեց Ս. Գրիգոր հայ Եկեղեցին, ընդհանուր Եկեղեցւոյ միութեան մէջ, ընդ հպատակութեամբ Գլխոյ Ս. Եկեղեցւոյ, Ս. Գրիգոր չէր կրնար կազմել ու չկազմեց Եկեղեցի՝ ո՛չ ազգային, ո՛չ անջատ, ի Քրիստոս ամէնքն մի են, չիք խափր: Եւսուր կայ խախ, չիք Քրիստոս: Մի է Քրիստոս, մի մկրտութիւն, մի Եկեղեցի, որ ունի մի գլուխ, ինչպէս ժամանայ անդամներն գլխէն անկախ չեն և չունին անունդ եթէ ոչ գլխուն տուածը, այսպէս չէ հնար ենթադրել անկախ Եկեղեցիներ ուրոյն վարդապետութեամբ: Անդամ բաժանուած, մեռած է. Եկեղեցի անջատ, անկենդան է. իբրեւ ուս մը զոր Հայր կտրած ձգած է աստուածային անկենդան է. իբրեւ ուս մը զոր Հայր կտրած ձգած է աստուածային Որթոյն՝ Քրիստոսի միութեանէն: Մին՝ անխառն է, անբաժանելի, անպառակտելի. Եկեղեցին այնպէս պիտի ըլլայ մի, ինչպէս Քրիստոս և Հայր մի են: Այն խումբերն, ո՛րչափ ալ ստուար ըլլան, որոնք անկախ են Պետրոսի Աթոռէն որ միշտ ճանչցուեցաւ հիմ, վէժ հաւատոյ և Գլուխ Ս. Եկեղեցւոյ, և որոնք ուրիշ վարդապետութիւն կը սորվեցնեն, ասոնք ի միութեան չեն, երկու հակասական վարդապետութիւնք չեն կրնար միանգամայն ճշմարիտ ըլլալ: ուստի անոնք որ Ս. Պետրոսէն, որ պիտի արածէ, ասորքեր վարդապետութիւն կը սորվեցնեն, խառնակ են, փո-

փոխական և ապականելի, պիտի կորսուին, ինչպէս Մարկիոն կորու-
ինչպէս Արիոս, Եւտիքէս, Լուտեր, «Ձի տե՛ք յոյխարաց անտի իմոց»
Անոնք որ Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած ուղղափառ Եկեղեցին
բաժնած են կամ կը բաժնեն ընդհանուր Եկեղեցւոյ Գլխոյն, Առաքելա-
պետին Պետրոսի Աթոռոյն մըրթենէն, քննոնք կը քայքայեն Ս. Գրիգորի
ուղղափառ Եկեղեցին, և ա՛յն իմաստով միայն կրնան կոչուիլ Գրի-
գորեան կամ Լուսաւորչեան, ինչ իմաստով որ Սկիպիոն՝ կործանիչն
Կարգեղոնի, կոչուեցաւ Ափրիկեցի:

Կան այնպիսիներ ալ սակայն, որոնք այլ և այլ կիրքերէ մղուելով,
ուրացած են այս ճշմարիտ վարդապետութիւնը զոր ուսած են իմաստաղ
տիոց, զոր և ուսուցած իսկ են, իբրեւ Քրիստոսի պաշտօնւոյք. ուրա-
ցած են և — մարդկային ամօթն ալ մէկդի դրած, — հակառակը սկսած
են սորվեցնել: Կը քննանայ կամ մեռած է յաւէտ այսպիսեաց խիղճը,
Լոնցուցած են զայն մարդկային պատիւներ, փառք, դիւրութիւնք, կը
ճգնին լուցնել զայն մոլար հրատարակութիւններով, սխալ մեկնութիւն-
ներով Աբետարանի, Հարց, շարականաց, բողոքական բանապաշտօգւով,
շաղակաբար ճողմարանութեամբ, ամբարտաւան իմաստակութեամբ,
ամէն անկեղծներու, ուրացողներու հետ սերտ բարեկամութեամբ, վա-
ղափառամ ծափերով: Աստուած ահաւոր պատիժներ ալ կուտայ
սակայն. հրեանդութիւնք, սոսկալի ծանականք, անարդարանալի ան-
ուանարկութիւնք: — Մինչ այս մինչ այն, կը տըժգունին հերք
և ալիք. կը պակասին ուժեր դողդաջ մասններու և ծռնկերու:
Կը նախազգացուն հոգեւարքի տագնապալից հառաչներն և գերեզ-
մանի հոտը: Ո՛չ, չքնանար յաւէտ այդ խիղճը. կտրելի՛ չէ... կամ
պիտի յաղթէ ու փրկէ, կամ պիտի զարթնու ահաւոր, և իբրեւ օձ պիտի
խայթէ յաւիտենատանջ թոյնով: Վա՛յ եթէ չի պիտափին, զի խաղալիք
ըրին զՔրիստոս. անոր Եկեղեցին, որ իր սիրելի Հարսն է, բաժնեցին
երկնաւոր Փեսայէն, անոր վարդապետութիւնը աղաւաղեցին. հայ Եկե-
ղեցին իբրեւ ինքնագլուխ, և անոր նուիրապետութիւնը իբրեւ աշխարհա-
կանաց սարուկ սորվեցուցին չ ակնադբիւրէն բաժանումը աւելի նուիրա-
գործելու համար, փայլուն քայց պին և ճամարտակ հասորներով: Ամեն
հերետիկոսապետ միշտ գլայթակղեցուցած է Քրիստոսի փոքրկունքը՝ բա-
նիւ և գրով: Աս անսակ մոլորեալները շատ աւելի շնասակար են, քան
անոնք որ ի բարի հաւատս կրնան գտնուիլ: Քանզի այսպիսիները, «մեզ-
մէ բաժնուեցան քաղի մեզմէ չէին»: «Մոլորեալք և մոլորեցուցանեն»
Իրենք են որ օտար և անջատ եկեղեցի կ'ուզեն, և յանուն Քրիստոսի,
և յանուն Ս. Գրիգորի անպատկառ կը ստեն: Այսպիսեաց համար է որ
գերաշանձարն Լուի Վէօյեոյ տարիներ առաջ, ստեղծած է գեղեցիկ նմա-
նութիւն մը, անուանելով զանոնք «խորանին մուկը» (le rat de l'autel)
իւր ահաւոր գրչովը, որ Եկեղեցւոյ թշնամեաց համար թիւ և սուսեր էր,

և որով համար կտակ ըրաւ որ իր դագաղին մէջ դրուի: Վէտյեոյի թըշնամիներն էին Աստուծոյ ու Եկեղեցւոյ թշնամիք: Ո՛չ մէկը խոտեց նա. կային այլ և այլ տեսակներ. կար դայլը, կար շնագայլը, կար կարիճն ու իժը. աւիւծները շատ հազուադէպ էին: Բայց կ'առէր նա զխառնութեամբ Մուկը, փոքրանդամ Գ. սրտամոմն, որ կը յաւակնի մինչև իսկ Ս. Գրոյ և Կաթողիկէ Կրօնից և Սրբազան Պատմութեան ոսկի էջերը պատուաւ: Եթէ ասոնք աղատ թողուն, կրճեղով զաշխարհ կը սպառեն: Ահա, կ'ըսէ, Վէտյեոյ, աւանդատան շուքին մէջ անո՞ւմ մոծցած մուկը, սակաւապէտ, չըջանայեաց, և մաքուր. օրհնած հացով անո՞ւմ. ատոր այս տեսքին, աւանդապահը շատ անգամ կրկնեց. « Ենորհքն յաղթեց բնութեան »: Ի՞նչ պատրանք. քանի մեծցաւ, բնական կիրքն երեւան եկաւ, կատաղի, անզուսպ: Ինչ որ կայ սրբավայրին մէջ, կը փորձէ զինքը. կ'ուզէ ամէն բան կրճել, գողո՞ղը:

Ո՛հ, գարշելի մուկ մ'է անշուշտ

Մուկն որ սքնաւ օրհնած հացով:

Յիշատակներ անհանգիստ կ'ընեն զայն. Յուդոյի փառքը նախանձելի կը դանէ: Կ'ուզէ յիշել ապագայի մէջ, իբրեւ խօսած՝ Յիսուսի վրայ: Գողողութեան մէջ քէն կը բւժանէ Կաթողիկէ սրբազնութեանց դէմ: Կ'ուզէ ըսել զիսնական մուկ մը, մուկ մը որ գրքեր կրճեց: Կը զուժարէ իր տաղանդը, լեզուազիտութիւնը, և իր տուտիւր՝ ներկուած ոսկի. ասոնք են իր ակօսանքը: Ահա գողողը, զիսնականը, արհամարհանը, բարձր ի վրէժս — մուկի մը ամբողջ բարձրութեամբ, — բոլոր կրճողները պիտի գերապանցէ, ուրացողները, բոլոր տնոնք որ կը քնանան նախաժողովեան Ակեղտամային մէջ, Կը մոկվցի կ'ելլէ Ս. Սեղանին վրայ . . . և

Եարձ. կելով Գրքին վրայ

Կը կրճէ Սուրբ Աւետարանը.

Ամբողջովի՞ն . . . ո՛չ, այլ մասամբ

Բառ մը տոտի, բառ մըն ալ անտի:

Տառ մը, չա՛տ չա՛տ՝ ոճ մը ամբողջ:

— «Չէ՛», չիկոտրենք, ծակենք անօթը:

Բոյրն ասով ալ կը փախչի» . . .

Ս. Սեղանը, լո՛ւկ, կը հանդուրժէ այս սրբազնութեան, և Ս. Նշխարը չարժիք գոց տաղանակին մէջէն:


Մուկը, գողող և ումարտատան, գոհ է իր գործած աւերին վրայ. բարձրաձայն կը գովուի. իբրեւ ծառայութիւն մատուցած Հայ Եկեղեցւոյ . . . կործանման, Հարկաւ. դժոխքն անհանգիստ էր այն օր. դժոխքը իր կատաղութեան ու ճգանցը անօգուտ բլլալը կը տեսնէր. դժոխքը կ'ըսէր. «Իսկարիովտացի մը պէտք է մեղի»! — Այսպէս փառաւորուեցաւ մուկը, գողող կրճողը:

Բայց ահա մօտալուտ կախուած կայ անէծքի շանթը զոր սպառնայ որդին մարդոյ սնունդ դէմ որ ան զրքէն տաւ մը կը պակսեցնեն կամ կ'աւելցնեն և Իւր խօսքը կ'աղաւաղեն : «Երկինք և երկիր անցնեն , և բանք իմ մի' անցնին» : Ով որ պիտի ընդհարի Ս . Եկեղեցւոյ վէմին , պիտի խորատկուի և որով վրայ որ իննայ ան , պիտի հոսէ տապալէ զայն» :

* *

Կան ուրիշ տեսակ նորելուկ կործանարարք , որոնք Աստուծոյ երկիւղը և կրօնքի զգացումը մերկանալով , կուսակցական աղանդով բորբոքած , կը քամահրեն : Կ'ոսնակոխեն , կը հայհոյեն ամէն սրբութիւն , ազգին ծոցէն կ'ուզեն փրցնել ցամքեցնել հուատոյ սուրբ ծաղիկը , ծառայելով իրենց կրից և շուայտութեանց , զոհաբերութեամբ և ի վնաս ազգին : Աւեր աւերի վրայ կը դիզուի , նիւթական ու բարոյական այս աստուածատունի Եղեմի մէջ , «ուր օրածեցաւ երէ վայրի և խոզ անառի» : Կ'անիծեն Ս . Լուսաւորչին յիշատակն ալ , անկրօններ , իրրե թէ քրիստոնէութիւնը պատճառած ըլլայ հայ ազգին անկումը : Կամ անմիտ են կամ կոյր , արեւու դէմ աչքերնին կը փակեն : Զի քրիստոնէութիւնը միայն պահպանեց հայ ազգը , այդ կրօնասիրութիւնը չթուլցուց անոր միութիւնը , սէրը , նուիրագործեց անոր հոլը , ջուրը , օդը , գիւցազնութիւն ներշնչեց հայու սրտին և վսեմութիւն անոր հոգիին : Սակայն , եթէ երբեք — զոր Աստուած մի' արտայէ — անկրօն կուսակցականութեան շահատակութիւնը տանի վերջնական յաղթութիւնը , ո՛հ , ան ատեն ճշմարտագէտ կը մեռնի ազգը . . . Բայց նախախնամութիւնը որ տապալեց պարօրիկ կրակապաշտը , Մողոլ գաղանը , որ աղատեց ազգը թուրանեաններէն , Սփինքսէն և Բաբելոնէն , հզօր է միշտ և կարող է փրկել նաև «Յամենայն անօրէնութենէ» , և գոյել նոր այս վիրապին ահագնաբարբառ կոկորդը , եւ իր հարազատ զաւակներն որոնք անաղարտ կը պահպանեն իրենց անմահն և սիրելի Հօրն Լուսաւորչի ուղղափառ հաւատոյ աւանդին գանձը , անբաժան պիտի փարին անոր և անդադար պիտի հայցեն անոր բարեխօսութեան հզօր օգնականութիւնը , որով վերջապէս Բրիստոս պիտի հաճի ասքանաղեան սերունդն ընել մի հօտ և մի հովիւ միացնել ընդ գլխոյն Ս . Եկեղեցւոյ , Եւ Տիգրիս ու Եփրատ դարիւ և դարիւ , Սեպուհ և Այրարատ՝ յամպս ծրարեալ , պիտի ցնծան ի տեղ աղաւնեբարբառ Գրիգորի բերած ձիթենւոյ ճիւղին , յափանցն Տիբերեայ : — Ողջո՛յն քեզ , «Անբիծ վարուք , արդարդ հոգւով , բանիւ ճշմարիտ և սուրբդ սրտիւ , Տէր Գրիգորիոս» :

Գ . Վ . ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ



Կաթողիկէայ (տես Արձագանգ թիւ 29, էջ 1—7), որով ամենուն ան լիաթի կը պատուիրէր հնազանդութիւն օրինաւոր առաջնորդին . բախկէր ան սպառնական զեկոյցը որով բանադրուել կը տեսնէր զանոնք որ մասնակից ըլլալ պիտի յանգզէին Տեղաւորին . ինչպէս զանոնք տալով կացութեան ծանրութիւնն ու հաւանութեան, ասով ցոյց տալով մէջ գտնուելը Աստուծոյ առաջնորդող ազօրինաւոր դիրքի մէջ գտնուելը : Աստուծոյ առաջնորդող ազօրինաւոր դիրքի մէջ Տեղապահ չընտրելով կացութիւնը թուի չունեցան : Կարծուեցաւ որ կ'ազատուի . մինչդեռ խնդիրը կամ արգելքը նիւթականի վրայ չէր , այլ հոգեւոր իշխանութեան ի հեծուկ վարչութիւն մը հաստատելը : Կարգիւնէր . այսքան յայտնի բանի մէջ ազդեցութիւն ձեւացուց . ինչպէս որ իրաւունքով իրաւունքով : Կ'ողորմեցնէր Ս . Հովնաթանը թէ . « Եւ ամէն ազգու . միջոցները բնաւ չզօրեցին խափանել այսքան չարիք . Կարծես իշխանի կ'ուզէ Բրիտանի Տեառն մերոյ խօսքերը . Բանի . անգամներ ուղեցի ժողովել քու զաւակներդ , ինչպէս որ հաւը կը շողմէ իր ձագերը թեւերուն ներքեւ , և չուզեցիք » :

1. Սրբազան Քահանայապետը այսքան ազօրինաւոր արարքներէ չ'երջը , կ'ընդհատէր ու կը մատնանշէ նաեւ տիրապետութիւնը բաժանման ոգիի մը . ի Հռոմէական Եկեղեցւոյ , Կանոնադրի նոր ծրագիր յորջորջուած գրութեան մէջ այս ոգին սկսած էր գեւ ընդ աղօտ մարմնաւորութիւն մը զգնուել , ազգային Կաթողիկէ Եկեղեցիի մը échaffaudage մը երեւան լերելով , իր ուրոյն սկզբունքներով , իրաւունքներով , հաւանութեան անկախ ու անձեռնմխելի սովորութիւններով . տեսակ մը անկախութիւն , զոր նախանձելի կը գտնէր թերեւս արեւելեան հերձուածող Եկեղեցիներու քով և որով կը դատաւարաւոր կամ լռելեայն կ'արտաքսէր ան . Դրաւորականութիւնը : Այս բնորոշ միտութեան բնական արդիւնք և իրր դրական արտայայտութիւն , նոյն ծրագիրը որոշակի կ'օրինաւորէր աշխարհական տարրին գերակշռութիւնը . ո' և իցէ եկեղեցական իշխանութեան վրայ , ստրուկներ դարձնելով եպիսկոպոսները ու Կաթողիկոսը , հաւասար իշխանութեամբ Սինոդոսի հետ : Այս օրէնսդրութիւնը իր յաւակնուած անկախութեան յանկարծակի ոտտումին մէջ շատ աւելի յառաջ գացած էր քան ո' և է արեւելեան անկախ եկեղեցի , նոյն իսկ հայկականը : Այս տեսակ հիմ մը ինչ չէնք կրնար գուշակել : Խնդրոյն մէկ տարւած մէջ առած ձեւը և կացութիւնը որու յանգեցաւ , գաղափարի այս վիճակին բնական հետեւութիւն մը կրնայ համարուիլ : Այս գաղափարին տէրերը այնքան համազուած էին իրենց գերակշռութեան , անկախութեան , ինքնօրէն գործելու ազգային իրաւունքին վրայ , որ դատեցին եկեղեցական իշխանութիւնն ու անոր գործերը , մեկուսացուցին զայն , նուիրագործուած աշխարհային իշխանութիւնէն վար առին , իրենք անոր տեղն անցան , ստակական աշխարհականներ , ազգին զլուխ կեցան , անձնիւր իշխանութեամբ , հասարակութեան տէր եղան և զայն վարելու համար զատ մարմին մը կազմեցին , պապնց Պատրիարքի , առանց Սինոդոսի :

առանց Եպիսկոպոսի, առանց Կրօնական ժողովի, առանց եկեղեցականի : Եւ եթէ ըսեն թէ իրենք միայն աշխարհական գործերով կը ղրաղին, մի՛ հաւատաք. որովհետեւ աշխարհական գործերով ղրաղելու համար ժողով մը կազմելու ԻՐԱՆՈՒՆՔԸ չունին միայն աշխարհականներ : այս իրաւունքը ունի միայն եկեղեցական կամ հոգեւոր Պետր իր Աւագանւոյ ժողովին հետ : առանց հոգեւոր Պետի ԶԿԱՅ ՈՒ ԶԿՐՆԱՐ ԸԼԼԱՆ, այս իրաւունքը : պարզապէս յափշտակութիւն է այդ, աններելի և աննախընթաց ապօրինաւորութիւն և հակօրինութիւն է այդ : Եկեղեցականութիւնը հակաէ, անհրաժեշտ է, մեր հասարակութեան աշխարհական կազմակերպութեան : պայման առանց որոյ ոչ. և այս՝ կախումն ունի հոգեւոր իշխանութիւնէն որ Քահանայապետէն հաստատուած է սննդով շաղկապ : Օսմ. Կայսրութիւնը դրած և նուիրագործած է այս օրհնիք, բարձր ֆէրմաններով : Օսմ. կառավարութիւնն ալ չկրնար թող տալ աս ապօրինութիւնը, առանց ինքն իրեն և իր օրինաց հետ հակասելու : այնքան ստոյգ է այդ նախադասութիւնը, որ Օսմ. Կառավարութիւնը Տեղապահի համար Պոլսոյն մէջ կ'օրինադրէր ԵՊԻՍԿՈՊՈՍԻ մը ընտրութիւնը : մինչեւ որ Պատրիարք մը ընտրուի : — Եւ եթէ ըսեն թէ եկեղեցական խնդիրներու բնաւ չեն խառնուիր : եկեղեցական գործեր բնաւ չեն կատարեր, մի՛ հաւատաք. արդէն չա՛տ խառնուեցան : Կոնգակ պատուեցին, այրեցին, անոր դէմ յայտարարութիւններ տպեցին ու ցրուեցին : Զայնաւոր Պատարագներ զարդեցուցին, աղմկելով յեկեղեցւոյ : օրինաւոր Եպիսկոպոսները մերժեցին ու կը մերժեն ճանչնալ և ապաստանութեան կը սաղարկեն գաւառները մինչեւ ցարտը ժամանակի : Կաթողիկոս մը՝ Ս. Քահանայապետէն ճանչցուած, իրենք պաշտօնանկ հռչակեցին՝ պաշտօնական թղթերով : զինքը իր բնակավայրէն վտարեցին : Սինոդոսը գտնեցին և անոր թղթերուն անպատկառ պատասխաններ տպեցին . . . ևն. ևն. իսկ հիմա, այդ վարչական ժողովը, ապօրինի և աշխարհական, կ'ըսէ թէ եկեղեցական գործ չկատարեր, բայց սակայն ամենէն ծանր եկեղեցական գործեր կը կատարէ : 1. եկեղեցապատկան ստացուածներու եկամուտները գրաւելու համար իր անդամներէն երկուքը պաշտօնապէս ղրկած է վարձուորներուն, վարձքերու հատուցումն արգիլելու համար առ եկեղեցական իշխանութիւն : Հայ Կաթողիկէ հասարակութեան սկսելուն առաջին օրէն ի վեր այսպիսի բան չէր տեսնուած : 2. Այս ապօրինութեան ներքեւ դեռ թաքուն կամայականութիւն մըն ալ կայ : Ժողովրդապետները և քահանայական զասը իրենք վարելու, կարծելով զանոնք միայն ամսականի արտուկներ, և այսպէս բաժնելու օրինաւոր եկեղեցական իշխանութիւնէն : հնար է՝ փնտռուած թիկունքը այսպէս գտնել յուսարով : 3. Քահանայապետէն կարգուած Արքեպ. Փոխանորդը, պաշտօնական գրութեամբ պաշտօնական Պատրիարքարանի մը առջեւ իրրիւ ամենեւին պաշտօն պաշտօնականութիւն, իրաւասութիւն չունեցող հռչակեցին և այսպէս

հրատարակեցին թերթերու մէջ. այսպէսով Գահանայապետին գործը դատեցին և ոչնչացնել յանդգնեցան. Գահանայապետին գերադաս և նախաթու և անոր դատաւորները եղան: 4. Նշանօրհնէնքի, որ զուտ եկեղեցական գործ է, վերաբերեալ գործողութիւնները պաշտօնապէս իրրեւ իրենց յատուկ հոգակեցին: Ա՛լ կը բաւէ: Ահա ասոնք են որ կ'ըսեն թէ եկեղեցական գործերու չեն խառնուիր:

Ահաւասիկ, ուրեմն, անջատ և սոսկ ազգային կազմակերպութեան մը ձգտումներով, յարճամարհանս և ի նախապինս եկեղեցական օրինաւոր իշխանութեան, հոգեւոր Պետէն բացարձակ անկախութեան ոգւով, աւանդ անոր միջամտութեան, նոյն իսկ անստուելով անոր և վտարելով զայն, և այսպէս քայքայելով Հասարակութեան եկեղեցական և՛ — բարհետեւորդի, — աշխարհական էական կազմակերպութիւնը, հաստատուած ամէն օրէնքներու հակառակ Վարչական ըսուած ժողով մը կազմելու յանդգնութիւնը իրաւամբ կ'որակէ Գահանայապետը՝ «Իմեղ նոյն իսկ քաժանութի ի Հոռվմեական եկեղեցոյ:»:

(Շարունակելի)



Մուհարրիր էճէնքի

Լէճճէն քերհէմսիքի քազսիմ էքսիլիմ պէնք. ախրէն Լիվընք Հէրըք ղազէքաքըն-ա կէօրիլվիւք քիր. միւնքէրէմ Արճաքանգա քէրն էքմէնիքի բէնո իքէրիմ էճէնքիմ:

ՄՈՒՃԻՊԻ ՀԱՅՐԵԹ ՏԵՍԻՍԵԼԵՐ

Մեղիքուն 10 Յունիս 1912

Պատրիարքաւորնա գւրչը իլանը իսեան էլէմիշ օլան էրմէնի գաթօլիքլէրի՝ ճէմաաթըն գըսմը ազամընը թէշքիլ իտէն քէնտիլէր իտուկի-նի վար գուլվիթլէրիլէ իտտիա էլէյօրլար. ֆազաթ պունլարըն էֆքեա-րը ումուսիլէի իղֆալ էլէմէք իւզրէ նէ կիպի թէսպիր վէ մուամէ-լէլէրէ թէնէղլիւլ էլէտիքլէրիի Մէրզիֆունա վազը օլան շու մէսէլէ փէք վազլի սուրէթաէ պէյան էտէր: Մէրզիֆուն էրմէնի գաթօլիք ճէ-մաաթը թարաֆընտան քէնտիլէրիի տինտար վէ ալիմ հպիսկը պուլու-նան Նազլեան գըրապայժառըն նէ գատար հիւրմէթ վէ նէ կիպի պէօյիք պիր սամիմիլէթլէ գապուլ օլունսաղը մալիւմ տիր: Բայիթալիմտա պու-լունտան մուխալիֆլէր պունա գարչը պիր շէյ եափամատըլար. պինաէն ալէյի հիշ տէյիւէ Մէրզիֆուն էհալիսի Նազլեանը իսթէմէյօրլար կիպի կէօսթէրմէք իճապ էտիօրար: Շու հալտէ հապս ճէզասըյլա մահքիւմ պուլունտան մէմլէքէթիմիլտէքի պազը սոսթլարընա հազարլար քի «Նազ-լեան գերապայժառ ալէյիլիտէ պիր մազպալմա եափտըրըպ սուրէթի քի-

Ֆայտէ իմզա թօփլայաճագ օլուրսանը՝ մահքէմէճէ հագզընըզսա սա-
սըր օլմուշ օլան մահքիւմիլէթինիզ գարարընը ֆէսի էթտիրմէյի վատ
էտէրիլ» :

Պուշլար իմզա թօփլամողա գալըչըրլարսա տա , 110 խանէտէն ի-
պարէթ պուլունան պիր ճէմաթ իչիւն հիշ աշիլսէ 40—50 իմզայա լիւ-
զում վար իտի : Զօգ զահմէթ չէքմէքսիզին քէնաի տօսթ վէ ազրապա-
լարնտան 10 իմզա թօփլամայա մուվաֆֆադ օլուրլար : Է սօնրա միւ-
թէպագի էհալի քեաֆֆէթէն Նոդլիսանը իսթէրլէր : Պուշուն տա գօլայըն
պուլուրլար . Թիւրքճէ օգույամայան պիր թագըմ քիմէլէրէ միւրաճաթ
էտէրէք «չու մազպաթա միւնթէրէմ կպիսկոպոսըմընը ֆէրմանընըն վէ-
րիլմէսի իչիւն հիւքիւմէթէ թագաթ օլունաճագ սըր : սիզ աէ իմզալա-
յըն» : Զափալըրլարն պու կիպի սիր հիլէ վար օլտուզը իսթըրլարն-
տան պիլէ կէմէտիլինսէն իմզա էտէրլէր : Պու տէսիսէյէ երմըր քիչի գա-
տար տիւշիւրիւրլէր : Լաքին պու գասարը քեաֆի աշիլ : տահա ուս
թալըզը սիր հիլէ աէ տիւշիւնիւրլար : Նայալըզ կաթօտ զայէթ չապուզ
գանըլը գաթօլիքլէրինքինէ պալը երմէնի կրէկօրիէնլէրին իմզասընը գօ-
տուրթմաղա գարար վէրիլլէր (նէ կիսի վատթալարլա օլտուզընը աէ-
մէյէ հաճէթ հօգ սըր) : Իսթէտիքլէրի մըզատարա իսլաղ էթմէք իչիւն
սաթթէքեարըզտան տա չէքինմէլլէր : մէմէքէթտէն ուզագ պուլուն-
տըզլարընտան թապիի բրօթէսթօ էտէմէյէճէք օլան պալը գաթօլիքլէրին
իմզասընը տա թագլա էլլէրլէր :

Օյուն պիթտիքտէն սօնրա , պու գըյմէթատըր վէսիգա Տէրաասէթէ
նէլարէթէ կէօնտէրիլմէք բիճասըյլա գարմադամա կէթիւրիւրլար :

Մաթթէթէսիւֆ պալը սոյլըսըլլար երգիւնտէն մէսէլէ մէյաանոյ
չըդար , իզֆալ իտիլէն , էֆրատ Նալլեան պերապայառա ոսարոյ օլտըզ-
լարընը կիտէր հիւքիւմէթէ պէյան էտէրլէր : Գայմաղամ թահիլոյթ իճ-
րա էտէրէք իմզալարըն նէ սուրէթլէ թօլանիւրլարընա վազըֆ օլուր :
պու խուսուստաքի ինֆիալը չէտիտինի պէյան էլլէր : մազպաթայր հօլ-
լամագ իսթէմէտիքտէն մասա , սահիպլէրինէ իսաէ էթմէք տաթի իսթէ-
մէլ : Պիչարէլէր գուրաղըլարը սուզաղա քէնտիլէր տիւշէրլէր :

Պուշուն իւզէրինէ մէնգարէ պիւսպիւթիւն տէյիչիր , սահիզ գաթօ-
լիքլէրէ կիտէրէք ալագլարընա տիւշէրլէր , քէնտիլէր իչիւն թէվասուլթ
էթմէլէրինի ծնարտան բէճա էլլէրլէր : հաթթա պիր կիւն էվլէլ ալլինի
իսթիտա էթտիքլէրի կպիսկոպոսլարընտան աֆըզ իսթէրլէր : Մամաֆիյէ
թանզիմ օլունան օ մազպաթա գայմաղամըն եէտինտէ պուլունտըղըն-
տան թապիի տիր քի ասալէթ վէ գանուն քէնաի հիւքմիւնիւ իճրա է-
տէճէք տիր :

Պու միսիլլիւ վաղատար նէ աէմէք իսթէտիքլէրինի քէնտիլիքլէ-
րինտէն աշիքևար սուրէթտէ պէյան էտէր օլտուգալընտան ֆազլա իյ-
զահպթա հաճէթ հօգ սըր : Իշթէ Մերզիֆունըն պու վագաասընտան պիր

քերքէ ստաւ անշաղկր քի աւազը պիւլէնտ իլէ իւան էտիւմէք իսթէ-
նիլտիլի իւզրէ թաշրատա վէ պէլքի պաշգա թարաֆտա տա պաարիար-
քա գարշը օլանլար ճէմաթըննի գըսմը սոզամը տէյիլ անճադ պիր
ճիւղի գըսմընը թէշքիլ էտէրլէր վէ պունլար ալէսսէվիյէ հայսիյէի վէ
իսթիգֆումէթին էն իպթիտաի էրքեանընտան պիլէ մահրում սորլար:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՄԸ

Կը գրեն մեզ Մարգուանէ

Վերջին ընտրութեանց ելքը բաւական յուսախար թողած էր ընդ-
հանուր ակնկալութիւնը, որ դաշնակցութեան խոստման վրայ մեծ յա-
ջողութեան մը կը սպասէր ի նպաստ հայ ազգի: Այս յուսախարութիւնը
բնականաբար դաշնակցութեան հանդէպ անախորժ ու աննպաստ հակազ-
դեցութիւն մը գործած էր հանրային կարծեաց վրայ, որ վրդոված էր ու
անվստահութեամբ կը նայէր եղածներուն վրայ:

Զթողու համար որ այդ հակազդեցութիւնը հայուն մէջ հակակրա-
նաց փոխուէր դաշնակցութեան ու անոր սատարող գործակցութեան
դէմ, Մարգուան եկաւ Պր. Խաժակ դաշնակցական, ուստիայ ընկերը և
բանախօսութիւններ բրած է Հայ էջմիածնականաց ճեմարանին սրա-
նին մէջ:

Առաջին անգամ խօսած է «Մեր քաղաքականութիւնը ընտրեան
վերջ» վերնագրով և ջանացեր է ցուցնել թէ խորհրդարանի մէջ հայ սա-
րեր ստուար կամ ցանցաւ թիւը նշանակութիւն չունի: Տաճիկ եղեր է,
հայ եղեր է, նոյն բանն է, բաւական է թէ ծառայէ երկուքին ալ հա-
սարակ ծրագրին որ գծուած է իթթիհատականութենէ: Այս առթիւ հրա-
ման արուած լղլալով առարկութիւններ ընել, տեղի ունեցեր է սաք
բանակալու մը, որուն հետեւանօք Պր. Խաժակի ջերմը բռնած ըլլալով
փակուեր է այն աւուր բանակցութիւնը:


Երկրորդ անգամ Հնչակեան ընկերութեան անդամները վիրաւոր
ուած Դաշնակցութեան այս ջատագովի սկնարկներէն՝ բանախօսութեան
սաք պահուն լոյսերը մարեր են, ահագին ժխոր մը բրթեր է՝ կիներ
մարեր են և բազմութիւնը դուրս խուժեր է, ոստիկանութիւնը հազիւ
կրցեր է անդորրացնել հոգիներն:—

Այս միջադէպէն վերջ Պր. Խաժակ Հաճի գիւղ զացեր է, հոն ալ
խօսեր է նիւթէ նիւթ ցատկելով և երբեմն ի Մարգուան ըսածը հոն հեր-
քելով, միջավայրը այնպէս կը պահանջէ եղեր: Ըսեր է ի մէջ այլոց թէ

Դաշնակցութիւնը ազգի չի ծառայեր, այլ մարդկութեան. ամօթ է գործունէութիւնը ազգի մը սեպականել. հետեւաբար դաշնակցութեան համար Տաճիկ Հայ նոյն է. նոյն Քրիստոս և Մէհմէտ, Տէրտէր ու Մոլլա, Պատրիարք ու Շէխ-իւլ-Իսլամ, տրանջացիք է որ Հաճի գիւղի կանայք չեն ուզած ներկայ գտնուիլ, մինչդեռ ասան պիտի գայ և եկած ալ է որ կանայք հանրային գործոց պիտի միջամտեն, ընտրութեանց մէջ մաս պիտի ունենան, թագական խորհուրդներու պիտի խառնուին ևն. ևն. Ընկերավարականութեան համար 'ի Հաճի գիւղ ըսած է թէ տակաւին ժամանակը եկած չէ հայուն. որովհետեւ մեծ պուրժուաներ կը պակսին անոր մէջ և հայն առ հասարակ աղքատ է: Դառնալով ի Մարդուան ընդհակառակն ջատագոված է ընկերավարականութիւնը և հիմակուց հարուստներուն ուժը կոտորելու է ըսեր է: Ընկերութիւնը հիմայ ըսեր է կառքի մը նման է, որուն ձիերն աղքատ դասակարգն է, հարուստը նստած է կառքին մէջ և կառապանը զրամն է. օր պիտի գայ որ հարուստներն ձի պիտի ըլլան և ձիերը պիտի բազմին կառքին մէջ, քու ալ դիտած տեղդ այդ ըլլալու է պատասխաններ է բազմականներէն մէկը: Կրնար այս երրորդ անգամն ալ չփութութիւն մը ելլել, բայց Ոստիկանութիւնը հարկ եղած զգուշութիւնը ձեռք առած էր և Պր. Խաժակ ալ աւելի ողորձ լեզու մը բռներ է:

Այդ բանախօսութենէն վերջ ուզած է Պր. Խաժակ իր ընկերաց սրտերը ամրապնդել առանձին և գաղտնի բանախօսութեամբ Դաշնակցականաց Դիւղի սրահին մէջ. ուր խօսեցաւ միայն ընկերներուն: Հըռչակեց Դաշնակցութեան ներքին ուժը, անոր գործութիւնը մանաւանդ Մամուլի վրայ. չեղտեց Կովկասիոյ մէջ ունեցած կռու կազմակերպութիւնը, ուր ըսաւ «գործում է գրիչ, գործում է լեզու, գործում է զրամ»: Տժգոհութիւն յայտնեց Հնչակեաններու հակառակից ընթացքին դէմ և ըսաւ թէ անոնց հետ չհամաձայնելու պատճառն այն էր որ ունոք կանուխէն Իթիլաֆականներու հետ միացեր էին: Յետոյ բացատրեց թէ ինչպէս այդ կուսակցութիւնը տկարացած է և թէ դաշնակցութեան հետ չափուելու չափ ուժ մը չէ նա ու իրենց չուտ մը ծրագրած չանտակութեանց տեղեկութիւն մը տալէ ետք, վերջացուց այս խիզախ կոչով «ամէն ոք պիտի գիտնայ թէ դաշնակցական ենք մենք և պարտքերնիս ենք կատարում»:

Կ'ըսուի թէ առանձին խօսակցութեանց մէջ քաջալերած ըլլայ խառն ամուսնութիւնը Մահմետականաց հետ, միայն թէ ազգութիւնը պահենք ըսեր է:



ԿՐՕՆԲԸ ՊԷՏՔ Է ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆԿԱՏՈՒԻ

Վերջերս այնևայլ գիտումով շատ կը յեղիցուի թէ Կոմբի անձնակազմ բան մըն է, որով և քաղաքագիտութեան և աշխարհային վարչութեան հետ առնչութիւն չունի: Ասով կ'ուզուի կրօնքը և տնօր ազգեցնութիւնը կզկոտացնել և չեզոքացնել, և ուսուցումը և ուրիշ կարեւոր բաները աշխարհականացնել: որուն հետեւանքը եղաւ կրօնական ուսուցման և միջնա եւ իսկ Աստուծոյ վստաւումը դարձցէն: Գաղղիոյ վարչապետ Բուէնքարէ խնայատեալաբար կը յենու այս սկզբունքի վրայ: որուն ամենարեկավ իր Հովուական թղթոյն մէջ Արհի. Եպան. Սէն—Ֆլուրի, սա գեղեցիկ վարդապետութիւնը կը մեկնաբանէ, ջրելով և հերքելով այս անկան սխալը:

Կրօնքը ի հարկէ սոմնախան բռն մըն է, քանի որ հողւոյ ամբողջական յարուժը կը պահանջէ. իրոյց միայն տնտեսական ու անհատական բռն չէ, ինչպէս ռմանք կ'ուզեն ցոյց տալ։

Նոյս և առաջ կ'աթորակէն անգամ է նկեղեցւոյ, որ կառարեալ ընկերութիւն մըն է, ընկերական կենդանի մարմին մը։

Բաց աստի, կը պատկանին նա մարդկութեան, և մարդկութեան մէջ՝ որոշեալ ընկերութեան մը։ Արդ, մարդկային ընկերութիւնները դէպ առ Աստուած պարտքեր ունին երկրպագութեան, հնազանդութեան և ուրթքի։ Պէտք է ցտախ տեսնց վրայ որ կ'ուզեն այս պարտքերէ ազատագրուիլ, Աստուծմէ զոտուիլ, աշխարհականանալ՝ ինչպէս կ'ընեն, քանի որչափ ալ փառաւոր ըլլայ անոնց արտաքինը, որչափ ալ գեղեցիկ ըլլայ անոնց զարդն ու պերճանքը, սակայն և աշխպէս շուտով կը քայքային՝ իրարու հակառակ բարոյականներու խառնաշփոթութեան մէջ, ումենէն յանգուզն ոճիրներու իրեայաջորդութեան մէջ, վերջապէս անիշխանականութեան մէջ, որովհետեւ նոյն իսկ իրենց յաջողութիւններուն դէմ չեն պոռտպանուիր այն միակ իշխանութենէն որ կարող է ստանել կրքերը, չափաւորել ու խորժակները, և հաշտեցնել մարդոց ընդդիմադիր շահերը. ոչսինքն Աստուծմէ՝ որ խըղճս մտառակներու լոյսն ու զօրութիւնն է։

Ընկերությունը մը հոգինեւ ժողովուրդ մըն է, ինչ որ է հոգին նոյնը պիտի ըլլայ նաեւ ընկերությունը։ Կրօնական կամ հակակրօնական հոգւոյ մը գործը, խօսքը, նշոյն իսկ մէկ շարժումը, իր պատկանած ընկերութեան մէջ անպատշաճ պիտի տարածուի, ինչպէս պատման հոգւոյ մը իսկ անշնորհ կործանողութիւնը ու ձորերու, մէջ։ Ուստի կրօնքը չէ է ճշտապէս ոչ ոք միայն անանկական բան մը. անի անհրաժեշտ ընկերական ալ է։

Ինչպես ուղեգնմ կ'ազգուի որ քրիստոնեայն մնայ իր Աստուծոյն հետ առանձին։ Ասոր նպատակը շատ դիտւածմանոր է։ Աղանդաւորները մտադրած են ջնջել քրիստոնեութիւնը, մարդկութիւն մը պատարաստել առանց Աստուծոյ, և այս նպատակին գիւրտն հասներու համար կ'ուզեն Կաթողիկէները իրարմէ բաժնել։ Այս տնջատուած ցրուած, միմէկ մտա-
ցած քրիստոնեաները պարտել յաղթելու դիւրին գործ է. հոգեւորաւ մէջ զԱստուած տն-
ջած հետադնելէ վերջը, դիւրին պիտի լլայց վտարել զ(Անիկայ) յանն ընտանիքէն և ընկերութենէն։

Այս ծրագիրը շատ յայտնի է,

Հետևաբար ոչ երբեք քան հիմա ստիճողական եղած է բրիտանից համար միա-
նայ խմբուլի՝ ծառայելու համար կրօնքի և պաշտպանելու գաշն, և այսպես թշնամիներու
ծրագիրն ի դերեւ հանելու։ Կաթողիկոսայք հարկաւ իրենց առանձնական կենսքին մէջ
ճշմարտապէս հաւատացեալ ըլլալու են. և այսպէս օկերով, պէտք և հոսիկան խմբուլներ
կրօնական շահերուն վրայ խորհրդակցելու, արտով և հոգւով միանալու կարեւորութիւնը
Մեծանաւորը մտածել կուտայ որ մարդկային դատ մը կը գերազատէ Աստուծոյ դատին, և
կուսովցական շահեր՝ կրօնքի ճշմարիտ շահերուն որոնք այնքան սերտիւ կապուած են հայ-
րենասիրական և ազգասիրական շահերու հետ։ Սրբազան Բանախոյապետն ստեպ և ազգե-
ցիկ խօսքերով ցոյց տուած է հարկաւորութիւնը՝ հաւատացեալը համար, խմբուլելու իրենց հո-
գեւոր հովիւներուն շուրջը, կրօնական գետնի վրայ, ուր ոչինչ կրնայ բաժնել զանոնք, Յի-
սուսի Բրիտանոսի դրօշակին ներքեւք միայն, որ այնքան բարձրէն կը տրիէ ամեն կուսակա-
ցութիւններու վրայ։ Մեծ Բաղտակաճոճիւնը՝ Բրիտանոսի նպալ է՝ կրնէր դեռ երկկ
Աստուածորդուն փոխանորդը, եպիսկոպոսներուն ուղղելով իր հայրական յորդորները։

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ԷԿՈՑՈՑ
ԵՐԱՊԵՐԱԿԱՆ

Կ. Պոլիս 21 Յունիս Ն. Տ. 1912

Սիրեցեա ռդւոց մերոց ի Քրիստոս
Փեռ. Վ.Վ.ց եւ հաւատացեալ ժողովրդի : Ս
Ողջոյ եւ աստուածաւանդ օրհնո քիւն

Սիրեցեալ Որդիք ի Քրիստոս

Քաջ գիտէք թէ հոգեւոր Հովիւներու, որոնց յանձնուած է Քրիստոսի բանաւոր հօտը՝ աշխուհիու համար յորտա բանին կենաց, ամենէն զլիաւոր որորտաւանդութիւններէն մին է հաւատացեալները զգուշացնել յոռի եւ մուր ընթերցումներէն, որոնք հոգւոյ վրայ չարաչար ազդեցութիւն կը ներգործեն, ուղիղ շաւղէն, ողջամիտ սկզբունքներէն եւ հոգստաւանկամ բարոյականութենէ սզրդեցնելով եւ գայթակղութիւն առթելով :

Արդ, բաւական ժամանակէ ի վեր է որ ծանօթ «Մեհմուաի Ախպար» թերթը, քաջարձակապէս հոգեւոր իշխանութեան դէմ դիրք մը բռնած է, եւ անդադար կը հրատարակէ յօդուածներ, որոնց մէջ կը ջանայ Եկեղեցական իշխանութիւնը լուստանքներու առարկայ դարձնել, Եկեղեցւոյ կանոնները անտեղի քննադատութեան եւ յաճախ ա՛յն է որ արհամարհանքի եւս ենթարկել : սուտ եւ սիտալ տեղեկաբերութեամբ մտքերու եւ խորհրտու վրդովում առթել. քմահաճ ենթագրութիւններով մտքերը խանգարել, եւ առհասարակ գրգռութիւն ձգել ժողովրդեան մէջ, աստ եւ ի գաւառս : Իսկ վերջերս, Ս. Քահանայապետին բանադրանքի վճիռէն յետոյ, նոյն թերթն կը յանդգնի նաեւ Կաթողիկէ Եկեղեցւոյ Գերագոյն Գլխոյ իշխանութեան, իմաստութեան եւ վարմունքին դէմ ալ յոխորտալ եւ վարկաբեկել զայն, դատելով եւ արհամարհելի ընելով :

Կը տեսնէք թէ ո՛րպիսի մեծ գայթակղութիւն կ'առթէ այսպիսի մոլոր սկզբունքներու ծառայող թերթ մը, որ չարունակաբար կը հետապնդէ այս դատապարտելի վախճանը : այնու մանաւանդ որ Կաթողիկէ անուան ներքե կ'ուզէ ծածկել իր ըմբոստ ուղղութիւնը :

Հետեւաբար, ըստ բերելոյ պարտուց պաշտամանս, ներկայ գրութեամբս պաշտօնապէս կ'արգելումք յիշեալ «Մեհմուաի Ախպար» թերթին ընթերցումը՝ քնդհանրապէս՝ աշխարհիկ եւ վանական կղերիս, եւ ո՛ր է Կաթողիկէ հաւատացեալ անձի, եւ կը յայտարարեմք որ այն թերթին մէջ գրողները, անոր ո՛ր է կերպով նպաստողները եւ հրատարակութեան ու տարածմանը օգնողները յանցանքէ սպառ չեն կրնար նկատուիլ :

Ի վերջոյ իբրեւ գրուական Մեր սիրոյն, կը շնորհեմք Ձեզ Մեր Հայրապետական օրհնութիւնը :


(Ստորագր.) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆԸ ԿԵԼԿԻՈՑ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Հ Ի Ռ Վ Ս


Վենետիկ քաղաքը, որու կործանած մեծ զանգակատան ի նորոյ կանգնուելուն նիւթապէս ու բարոյապէս այնքան օփնեց Ս. Բահանյայպետը, որտազին շնորհակալութիւն յայտնեց նորին Սրբութեան, և ի նշան երախտագիտութեան նուիրեց Անոր Ս. Մարկոսի այն զանգակատան վրայ վարդարող սակեղէն հրեշտակին փոքր մէկ նմոյշն, յոյժ արուեստական ճարտարութեամբ շինուած, բարձրութիւնն է 13 հրմդ. խորխոր՝ 20: Ամենանւերս գտնուեալ մըն է, սակեղծ արծաթէ ձուլուած:

Կոստանդնուս Կայսեր Մաքսենտիոսի վրայ տարած յաղթութեան, և քրիստոնէութեան ազատութեան ի յիշատակ կատարուելիք հանդիսութեանց տութիւն Միլվեան կամուրջին քով արուեստակերտ Աղօթարան մը պիտի կառուցուի, իսկ գլխաւոր ճամբուն վրայ որ կը տանի Բոլորի դուռը, Մայր-Եկեղեցի մը, որոնք պիտի ծածկուին մարմարեայ յիշատակարաններով և վիմագիրներով:



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Սթամպուլ կ'ըսէ թէ ներքին գործոց նախարարը Ս. Պատրիարքին դիմումներուն վրայ Վարչապետին գիր մը ուղղելով առաջարկած է որ այս տարի ալ 10,000 սակի վճարուի Ատանայի Հայ Որդանոցին:



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Երեսփ. Ժողովին նստաւիշակը. — Կառավարութիւնն որոշեց որ Երեսփ. Ժողովին ներկայ նստաւիշակը երկարի մինչեւ Յուլիսի վերջը, սրպէս զի կարենայ վիճաբանիլ ելմտացոյցին ու կարգ մը սահմանական օրինագիծեռու վրայ և քուէարկել զանոնք:

— Իրքիհասական օտկան «Հազգ» խմբագրականով մը պատասխանելով Նովոյէ Վիւսիայ թերթին մէջ Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսի վերագրուած յայտարարութիւններուն Ռուսիոյ Չարին ներկայութեան ընդունուած պահանջն. կը գանգատի թէ ինչպէս կրնար Կաթողիկոս մը անկեղծօրէն ըսել թէ «Մեր, Հայոցս ամբողջ ակնարկները պէտք է յառած ըլլան Ռուսիոյ» Բայց ի վերջոյ Հազգ ինք ալ կը խոստովանի թէ գրախտային կեանք մը չէ որ Հայերը կը վարեն Անատոլիոյ խորքը:

— Երեսփ. Ժողովը Սահմանադրութեան 7րդ յօդուածի փոփոխութիւնը ընդունեց 15ի դէմ 210 ձայնով. փոփոխուած յօդուածը սապէս յղացուած է.

«Վեհապետը իրաւունք ունի ի հարկին լուծել Երեսփ. Ժողովը 35րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն և յետաձգել նստաշրջանը. սակայն յետաձգման տեւողութիւնը տարեկան նստաշրջանին ամբողջութեան կէտը անցնելու չէ. նաեւ թէ նստաշրջանը պէտք է միեւնոյն տարին աւարտի»

— Սամուէ կը հեռագրուի թէ Մարաթոքամբօ գիւղէն մաս մը գիւղացիներ գինեակ լեռը քաշուեր են իշխան Վալիէրի էֆ.ի դէմ բողոքելու համար, որ չէ ուզեր ներում շնորհել Սօֆուլիսի իշխանը հրաման ըրեր է ապստամբները հետապնդել: Արդէն ընդհաւրում մը տեղի ունեցեր է, բայց արդիւնքը անձանօթ կը մնայ: Կացութիւնը ծանր է:

— Մանասղըրի վերջին դէպքերուն մասին Սելանիկի Լեւեթանիսան թերթը կը գրէ թէ զինուորներու գումարտակ մը. մեծ մասամբ Ալպանացի զինուորներէ կազմուած, Ալպանացի հարիւրապետ Թայիար պէյի հրամատարութեամբ դատուիք ըլլալով լեռ քաշուած է: Ասոնք միասին տուած են իրենց հրացանները, մէկ քանի խորարկեց և 1,000 օսմ. սակի իրը թէ ըմբոստները կը պահանջեն որ փոխուի Գահլիճը, որ պատճառ կ'ըլլայ երկրի կործանման. Իթթիհատը լուծուի, Երեսփ. Ժողովը ցրուուի և նոր խորհրդարան մը կազմուի ազգին ազատ քուէով: Մամուլը Դիւանն ալ կը հերքէ այն լուրը՝ ըստ որում տաւաքը Զոկատ ևս միացած ըլլան ըմբոստներուն:

Հմտութեան առաջին առնելու համար պէտք եղած միջոցները թէեւ ձեռք առնուած են, բայց ցարդ ո՛ր և է արդիւնք չէ տեսնուած:

* Կ. Պոլսէն Յունիս 28 թիւով եր հեռագրեն ժայէ Փրէսէյի.— Երէկի նախա-րարաց խորհուրդը որոշեց 30,000 հոգի իզմիրէն Մանասթըրը զրկել զպէլու համար ապրս-տամբական շարժումը: Տեղւոյն հրամանատար Ապտուլլահ փաշա հեռագրու ապտոսիսա-նեց պատերազմական նախարարին թէ իզմիրի սպայակոյտը կայսրութեան բոլոր ապանե-րուն նման եղումը բրած է իրենց ընկերներուն դէմ չի պատերազմիլ:

—Այս շարաթ մայրաքաղաքս հասաւ հելլէն թագուհին Օլկա:

—Սպանետու եւ զինուորներու քաղաքականութեամբ զբաղիլը արգիւղ օրինագիծը Երեսփ. ժողովի զինուորական էնճիւմէնին կողմէն միաձայնութեամբ ընդունուած է:

—Պատերազմ. նախարարը որոշած է բոլոր դասակիքներն ալ Պատերազմական Ատ-եանի առջեւ հանել:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԻՏԱԼԻԱ.— Հռոմէն կը հեռագրուի թէ Երեսփ. ժողովն ընդունել է գաղթային նա-խարարութիւն հաստատելու վերաբերեալ օրինագիծը:

ԱՄԵՐԻԿԱՅ.— Հանրապետական Ազգ. ժողովը վերջապէս նախագահութեան ընտրելի նշանակեց 561 ձայնով Մր. Թաֆթը, ընդդէմ 107 ձայնի, զոր ստացաւ Մր. Բուզֆելդ: 41 քուէ ստացաւ Մր. Լաֆոլէթ, 17 Մր. Քմինս և 2՝ Մր. Հիւփ: 344 պատուիրակ ձեռնա-պահ մնացին:

—Հռոմէ կը տեղեկագրուի թէ Արտաքին գործոց նախարար մարքիզ Սան ճուրիանօ պաշտօնապէս զեկուցել է Հռոմի օտար դեսպաններուն թէ Իտալիա մինչեւ Յուլիոսի երկ-րորդ շարժումն պիտի սպասէ տէրութեանց բանակցութիւններուն վտաճանին, որմէ վերջ պիտի վերջապանեն իր գործելու ազատութիւնը:

—Պուժալոյէ (Մ. Նահանգ) քրանս. թերթի մը կը հեռագրեն թէ՝ Նիսկարայի քարափներէն մէկը, Իկը Բարբի մէջ, փլչելով երկու հարիւր հոգի գետին մէջ ինկան: Ար-դէն 14 գիտիկներ հանուեցան և զոհերուն թիւը կը հաշուուի քառասուն: Հասանքին տա-րագութիւնն է գրեթէ ժամը 9 մղոն, և տիրող մթութիւնը տաժանելի ու վառեղանք կը դարձնէ ազատարարներու աշխատութիւնը: Ազէտը տեղի ունեցաւ ջրվեժէն 11 քիլո-մէթր վեր:

—Օտէսայէ լուր կը տրուի թէ ռուս շոգենաւային ընկերութեան 800 նուաղները և գործաւորները բանթոյ հռչակած են՝ օրականի յաւելում պահանջելով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ	337
Ս. Քահանայապետի ցամակը	342
Մուցիպի հայրէք սեսիսէիք	345
Դաւեանկցական գործիչ մը	347
Կրօնքն ընկերական է	349
Մեհմուտի Ախպար քերթի զաւապարտութիւնը	350
Տեղեկագրական	351

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԶ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՕՐԷՆ-ԽՄԱԴԻՐԱԴԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Դորձակցական Ընկ. Էպուսուուս հասէսի: Նո. 27

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատշտական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութիւնք բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոք ամեն յուրերն՝ համառոտ-ուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին ծրարեր կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիտել . առժ. 40

Վեցամսեայ » » 20

Արսասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ կամ մէյ մէկ դր.նոց նամակադրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ, յղուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պատշաւորեալ չէ անպատշաւո կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո եւ է յղուած:

3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան յոգմբ միայն: յիշն մէկ

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք արուին: